— Ա՛յ մարդ, — ասաց ինձ, երեսը շուռ տալով, — դու ոչինչ չես հասկանում. հերձուածողն էլ հայ է, հայն էլ հերձուածող է, ուրիշ ի՞նչ զանազանութիւն կայ այդ խօսքերի մէջ:

— Շատ զանազանութիւն կայ, — պատասխանեցի ես, եւ զանազանութիւնը կամենում էի ցոյց տալ ձեռքիս մտրակով, բայց Արփիարը աչքով արեց, եւ ես զսպեցի իմ բարկութիւնը:

Նա, իմ բարկութիւնը նկատելով, վշտացած կերպով հեռացաւ մեզանից:

Արփիարը նկատեց.

— Այդ անպիտանները իրանց կաթոլիկ էլ չեն կոչում: Ուրիշ տեղերում, եթէ հայ-կաթոլիկները ուրանում են իրանց հայութիւնը, գոնէ իրանց «փռանգ» չեն կոչում: — Ահա դրա մէջն է եզուիտների գլխաւոր վնասը՝ լատինացնել եւ ազգայնութիւնը, ազգային զգացմունքը ոչնչացնել...

Երբ փոքր-ինչ առաջ գնացինք, կրօնաւորը իր ձին պահեց եւ, ձեռք տալով Ասլանին, բաժանուեցաւ մեզանից, ասելով.

— Շատ ցաւում եմ, որ իմ ուղեկցութիւնը այդպէս կարճատեւ եղաւ ձեզ հետ, պարոն բժշկապետ, ես այդ գիւղը պէտք է գնամ մի հիւանդի այցելութեան:

— Այդ աւելի կարեւոր է, — պատասխանեց Ասլանը ժպտալով: -մնաք բարեաւ, տէր հայր:

Մենք շարունակեցինք մեր ճանապարհը դէպի Մուշ: Ասլանը տխուր մտածութիւնների մէջ առաջ էր քշում իր ձին: Ես եւ Արփիարը դեռ շարունակում էինք խօսել կրօնաւորի եւ հայ-կաթոլիկների մասին:

— Զարմանալի կոպիտ մարդիկ են այդ հայ-կաթոլիկները, — ասացի ես, չմոռանալով կրօնաւորի ծառայի իմ վրայ թողած անախորժ տպաւորութիւնը:

— Նրանք հայերի հետ միայն այդպէս են, — պատասխանեց Արփիարը՝ իր ձիու ընթացքը հաւասարեցնելով իմին, որպէսզի ես լաւ լսեմ նրա խօսքերը: — Բայց երբ պատահում է նրանց մի օտարազգիի հետ խօսել, այդ դէպքում ստրուկի պէս խոնարհ են դառնում: Ատելութիւնը դէպի իրանց ազգայինները այն աստիճան զարգացել է նրանց մէջ, որ, մի հայի պատահելիս, այլեւս իրանց պահել չեն կարողանում, մոռանում են քաղաքավարութիւնը: Ամէն օտարազգի աղանդաւորներին նրանք կը ներեն, բայց հայի երեսին անամօթութեամբ կը նետեն «հերձուածող, չարափառ, հերետիկոս» եւ այլ անուններ: Այդ կաթոլիկ կղերի դաստիարակութեան արդիւնքն է: